

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մեջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկով.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիւրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղութեամբ: Մեր ստանում ենք սեփական ՀեՌԱԳՐՈՒՆԵՐ:

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԷՆ ՍԿՍՂԱՅ Է:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի, ամսական 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ՔԱՂԱՔԱՎԱՆԸ (Բաղայնայա և Բարձրակայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն մանկիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վնասակար հոսանք. Պետերբուրգի թիւրքաց զեապանի կողմից, Պէտք է հրապարակ հանել. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաշարժ Խաղաղութեան. Արտաքին լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նա-մակ թիւրքայից.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԵՍՏ
(Հեռագիր նոյեմբերի 14-ից)

«Զայտում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. Աստուծո՛ւ օրհնութեամբ կատարվեց այսօր Զմերային պալատի տաճարում, հոգեորական և աշխարհական անձանց ներկայութեամբ, Մեր պապագործի Մեր սիրեցեալ Հարսնացուի՝ Բարեպաշտուհի Մեծ Խիսմետի Ալեքսանդրա Ֆեօդորովայի, Հէստին Մեծ դքսի ազնվային հետ խորին վշտով մէջ, որով լցված են Մեր և Ռուսաստանի բոլոր հաւատարիմ զաւակների սրտերը, թող ինչի այս օրը փայլուն համալսարանի ժողովրդական յօդերի՝ որ կը շարունակվի Աստուծային ողորմութիւնը դէպի Մեզ Նոր թագաւորութեան սկզբնաւորութեան ժամանակ, խորհրդա-

ծելով նրա վիճակի մասին, Մենք բարեք համարեցինք չը յետաձգել Մեր սրտագին ցանկութեան, ի Տէր հանգուցեալ Մեզ թողած սրբազան պատւերի և ամբողջ ժողովրդի ուրախալի սպասելիքների կատարումն: Եւ թող ամբապնդվի ս. եկեղեցու խորհրդով Մեր ծնողների օրհնած ամուսնական Մեր, շաղկապը. Մեր բոլոր հաւատարիմ հպատակները կը միանան Մեզ հետ աղօթելով, թող առաքել Աստուծո՛ւ իր օրհնութիւնը Մեր ժողովրդին և շնորհէ Մեզ ի բարօրութիւն Ռուսաստանի, նոյնպէս անխնայ երջանկութիւն, որով օրհնված էր իւր տան մէջ Մեր անմոռանալի Մեզ, ի բարտ և ի միւսիմարութիւն ամբողջ ժողովրդին»:

Մանկիւնում յայտարարված են շնորհներ, որոնք վերաբերում են զանազան պարտքերին և զանգառաներին թեթեւացնելու տոկոսներ վճարելու մասին, զանազան պալատիկների բարձման, վնասների, տուգանքների և պակասած գումարների ներման, ընդհանուր քրեական յանցանքների համար այն պատիժների թեթեւացման և կրճատման, որոնցով բնատարւորութեան և բերդարգելութեան են դատաւարութեամբ, ոստիկանական հսկողութեան, տաժանակիր աշխատանքների դատաւարութեան: Իսկ պետական այն յանցաւորների վերաբերմամբ, որոնք ներդրութեան արժանի են,

հրամարված է ներքին գործերի մինիստրին ամենահպատակ զեկուցում ներկայացնել: Պետական յանցանքների վերաբերեալ այն գործերը, որոնք 15 տարի հրապարակ չեն հանված, մոռացութեան են արվում: Իրաւունք է արվում ամեն տեղ ապրելու այն անձանց, որոնք պատիժ են կրում 1863 թ. ի հակառակ ապստամբութեանը մասնակցելու համար, վերականգնեցնելով նրանց ծագումն իրաւունքները, բայց առանց վերադարձնելու կալուածները, աստիճանները, շքանշանները և ծառայութեամբ ձեռք բերած իրաւունքները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՆԱՍԱԿԱՐ ՀՈՍԱՆՔ

Վերջին ժամանակներս Պարսկաստանի հայ ժողովրդի կեանքի մէջ այնպիսի երեւոյթներ են տեսնուել, որոնց վրա անկարելի է լուրջ ուշադրութիւն չը դարձնել: Այդ երեւոյթները նշանաւոր են նրանով, որ նրանք ցայց են տալիս մի վնասակար, ազդեղ ուղղութիւն, որն արդէն համարվում էր արմատախիլ եղած, ցայց այժմ նորից փորձում է բարձրացնել իր գլուխը: Այդ նոր ուղղութիւնը, այդ նոր հոսանքը սկսել է առաջ գալ հայ հոգեւորականութեան մէջ և այդ հոսանքը, ինչպէս երևում է, արդիւնք է ներկայումս էջմիածնում տիրող ոգուն և ուղղութեան:

Բայց դիմենք իրողութիւններին: Թաւրիզում մինչև այսօր ազգային գործերի զեկաւարտութեան մէջ այն սիտեմն էր տիրապետում, որ թեմական առաջնորդը թեմի կառավարութեան գործին մասնակից էր անում տեղական դպրոցների հոգաբարձութիւնը, և ժողովուրդը՝ ընտրելով դպրոցների համար հոգաբարձութիւն, գիտէր, որ այդ հոգաբարձութիւնը կուզված է մի և նոյն ժամանակ մասնակցել Արապատականի թեմը ազգային գործերի կառավարութեան:

Ճիշդ է, ժողովրդական ներկայացուցիչների այդ մասնակցութիւնը կատարվում էր նա հաւաստական ձևով, բայց հոգեւոր իշխանութիւնը միշտ իրան պարտական էր գգում ազգային բոլոր կարեւոր խնդիրներում խորհրդակցել ժողովրդի ներկայացուցիչների հետ կամ յիշեալ հոգաբարձու-

թեան՝ կամ ընդհանուր ազգային ժողովի միջոցով, քաղաքի առաջատար և նշանաւոր անձերից:

Ժողովրդական մասնակցութեան իրաւունքը այնքան խոր կերպով արմատացած է Պարսկաստանի հայ ժողովրդի կեանքի մէջ (թէև, կրկնում ենք, այդ մասնակցութիւնը կրում է նահապետական բնաւորութիւն), որ ահա մի քանի տարի է ինչ յարուցված է մի ընդհանուր վարչական կանոնադրութիւն կազմելու հարցը Պարսկաստանի երկու թեմերի հայ ժողովրդի կառավարութեան համար: Հէնց այս տարի թէհրանի և թաւրիզի հայ հասարակութիւնները դիմեցին էջմիածնին, խնդրելով մշակել և կազմել տալ մի որոշ կանոնադրութիւն, և ուղարկել առաջնորդներին գործադրութեան համար:

Ուրեմն, ապացուցված, անհերքելի իրողութիւն է, որ Պարսկաստանում ազգային գործերի կառավարութեան և վարչութեան մէջ մասնակցութիւն ունի ժողովուրդը իր ներկայացուցիչների ձեռքով, թէև այդ մասնակցութիւնը որոշ կարգ ու կանոնի տակ չէ գրված:

Մի ուրիշ փաստ: Պարսկաստանում կան և այլ լսողական հայեր, — բողոքականներ և կաթոլիկներ, թէև սակաւթիւ: Բայց այդ այլադաւան հայերը, նոյն շրջանի, նոյն կուլտուրայի, նոյն երկրի զաւակները, միշտ միջամտել և մասնակցել են ազգային գործերին և նրանց վարչութեան, ընտրվելով մի տեղ հոգաբարձու, անդամակցելով մի ուրիշ տեղ ազգային բարեգործական և այլ ընկերութիւններին և այլն: Նոյն թիվ 1892 թ. ին, կաթոլիկոսական պատգամաւորների ընտրութեան ժամանակ, բողոքական հայերը մասնակցեցին այդ ընտրութեան առաւելում: Թէ կաթոլիկոսը ոչ միայն կրօնապետ է, այլ և ազգապետ և հայ ազգի ներկայացուցիչ ու պաշտպանը Պարսկաստանում: Թէհրանում, ամբողջ 20 տարի, Ռուսամասիկաց ազգային ընկերութեան և դպրոցների հոգաբարձութեան ատենապետն եղել է մի հայ կաթոլիկ զինեալ, Դարլ Բեկիլեան անունով: Թաւրիզի թէհրանի ազգային ընկերութեան անդամակցում են և ընտրվում են զանազան վարչական պաշտօնների համար անխափ և լուսաւորականները, և կաթոլիկները, և բողոքականները:

Եւ նախկին թեմական առաջնորդները երբեք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՅ

Մուշ, սեպտեմբերի 10-ին

Երբ, օգոստոսի 1-ին տաճկական զօրախուճը մը Մուշին մեկնեցաւ դէպի գաւառ, ձայներ բարձրացան ու ամեն բերանէ ըսուեցաւ, որ այդ զօրախուճը, որ բաղկացած է 250 զինուորների, «Տաւրիկին աւերելու կերթայ, զի ապստամբ նրա կատված է կառավարութեան»: Ահ ու զոյ պատեց աղբատիկ ու 500 տարվան տաճկական լուծի տակ մաշվող մուշիցի և սասունցի ժողովուրդը Տաճիկ զօրախուճին ուղղուեցաւ: Եւ նրա անուանալ գիւղն և վերջնոյս արեւմտեան կողմ՝ մարգագետնի մէջ, որոնց «մեկնեցողան» կանուանեց, իր վրաններ հաստատեց: Նախ բնակատեղ աղբոյնը նշանակեց, և ոչ ի Տաւրիկին քաղաքում որ քրիստոնէականութեան ու եւրոպացի ձանապարհ անարգել ու արձակ կը պահպանուի դադը անցը փակելով, մանաւանդ թէ քաղաքի, որ Շէնքի և հանուր գաւառացի հայոց բանուկ ձանապարհն աւելի այդ կողմէն է՝ տաղանայի ժամուն լուրեր տանելու այլուր:

Արդէն տաճիկն ուխտեալ նպատակաւ, խորամանկութեամբ սպասեց մի քանի օր անձայն և ոչ ոքի ներկայութեան Սակայն միամիտ գաւառացի

ժողովուրդը, տեսնելով տաճկաց անտարբերութիւնը չորս հինգ օրվայ ժամանակամիջոց, ինքն իրեն յուսատու կը լինէր: Աւելի միջոցն ու տաճիկ տարր այդ կերպ աւելի կը թմրեցնէր հայերին, որ լաւ նիւհն, որպէս զի օրինաւոր լինի իր պատրաստութիւնը, աւելի հմտանայ տեղւոյն լուսնից ու հովտաց, որ կանոնաւոր ճակատ յարդաւրէ անդին ու ոչխար գաւառացի ժողովրդեան դէմ, մանաւանդ որ միջոց էլ ունենայ կառավարութեան հրաման հաղորդել ամենուրեք վայրերում: Եւ ինչպէս չէ, մոլորանքներ, հեմիդիէի զինուոր փաշայից և էշիրացի զինուոր աղապից: Արդէն վաղուց զազաւաղողի հեռագրաւ հաղորդված էր ամեն տաճկական հեռաւոր քաղաքներ բոլոր մուսուլմանը չէին ու մոլորանքներ, «Տին էլ ինչ» բառով:

Չօրախուճը եկած օրէն յատուկ ոստիկաններ զրկուեցան կառավարութեան կողմէն՝ նոյն իսկ անկարող քրիւղեր ժողովելու ի գաւառ, այդ հրաւեր յանձն-չառնող մեծամեծ պատժոյ ենթարկել սպառնալով: Արդէն քրիւղ տարին ալ այդպիսի հրաւերի մը կը սպասէր, խումբ-խումբ դէպի գաւառ կը վազէին՝ թանձրանալու զօրաբանակի քով: Քիչ-քիչ կարծրեցաւ գաւառացին, մտածելով որ ասոնց ժողովին նպատակաւոր է: Աւելի կը հաւատար, երբ կը տեսնար կանոնաւոր զօրաց անթիւ բանակաց գալ ու զիջվել, կը զոգոր լսելով, որ գաւառ աւերելն է սոցա նպատակ, բայց չէր յուսար ու հաւատար՝ որ սրայ ճարակ

պիտի ընէ զիրենք ալ, որովհետեւ չէ լսուած որ կառավարութիւն մը անհաշիւ բազմութեամբ յարձակի իր հպատակաց վրա և սրայ ճարակ տայ՝ նոյն իսկ եթէ ապստամբ ալ նկատված լինի: Վերջապէս, երբ տաճկական զօրաբանակներ կարինէն, իրիզայէն, վանէն, Պաղտաւէն, Տիգրանակերտէն, Բաբերդէն, Բաղիշէն և Մուշէն հասան ու նոյնպէս այդ նշանակեալ զաւաղաց գաւառներու լեռները բնակիչ հեմիդիէի քրիւղ ու էշիրեր միասին խառն կազմուեցաւ 50,000 զօրաբանակ մը, յայն ժամ Ֆէրիք փաշան լուր զրկեց հայ գաւառացիներուն, որ պատրաստ գտնվին, ըսելով թէ ձեզի արդ ճարակ անելու եկած եմք, որովհետեւ դուք ապստամբ էք և տէրութեան չէք հնազանդիր: Վերջնական վճիռ էր, ալ ժողովրդեան աղբրս ու արտատուք անխնայ եղաւ: Եւ ամեն կառավարութեան Ալ ճարահատեալ լուսնացիք ընտանիքներով հանդերձ ամբացան Անտոք ըսված լեռն: Ամեն ընտանիքներ ու անհանգիստ մէկ տեղ ամփոփելով՝ իր զեղջիկական դէմք վեր առաւ:

Օգոստոսի 18. Ուրբաթ առաւօտ, որ տաճկական նուիրական օրն է, քրիւղ հեմիդիէներու ու էշիրաց խումբեր, Ֆէրիք-փաշայի հրամանաւ, յառաջ մղուեցան: Սկսած հրացանայ պայթիւն ու առեւիկ պատերազմ, ոսկայն քիչ մը վերջաւորուկ ըսուած գաւառացին ամենի առիւծ դարձաւ: Գնաւոր կը սուլէր ու քրիւղ բարբարոսն անդունդ կը գորէր: Տեսնելու էր թէ ինչպէս

թէ զ մայրեր ու կանայք խեղահեղ եղերգելով՝ մեռած զիւրերը վերցնելու կը վազէին: Տաճիկ բանակն միևուր կեցած խոր տիրութեամբ զբոլաց կոտորումն կը դիտէր, թէպէտ և աւելորդ զենքերն ալ զբոլաց յանձնէր էր: Բայց և այնպէս անկարելի էր հայերը չարացանաց դէմ կանգնելու: Եւ ամեն օր քրիւղը կը յաղթելէն ու հայր յաղթելու կը հանդիսանային: Հնար չը կար հայր յաղթելու: Յուսահատ ու ամօթալից ֆեայ տաճիկ բանակն կը կատաղէր, սակայն դեռ ևս քրիստոնէայ պետութեանց երկրի վրա անհաշիւ, չը կար ոյժ ու համարձակութիւն անձամբ դէմք բարձրացնելու հպատակաց վրա:

Սակայն վճեց արձամարհել քրիստոնէայ տէրութիւններէ ունեցած կառավար. մաս մը համր զինից ու էշիրաց հրաման ըրաւ, որ գաւառ կացած զիւրեր խուզարկեն, գոյքերը կողոպտեն ու բնակութիւններ հոյ ճարակ տան: Անմիջական կերպով սկսան խուզարկել, գտան անհաշիւ կապուտ կողոպտու ու բնակութեան տեղերը կրակի մատնեցին: Արդէն բնակութիւնը հուրէն կը ճարձատէին. գաւառացին լեռը քարացած՝ ներքէն այրվող զիւրեր կը դիտէր: Կանանց, աղջկանց ու մատող երեխայից գոռում ու գոչման հետ կը գոռացնէին հրացաններ՝ խորխորայն ու սիրտ տալով ամենին: Չ'օ, խումբ մը ընէք, Աստուծո՛ւ ողորմած է, Աստուծո՛ւ հաստատ պահէ զմեր քրիստոնէայ տէրութիւնները, ընդուք զմեր հաւիթքդի առնեն զաջնուց, զգրիչ գացէք, աղ-

արգելք չեն եղել այդ շարժման, երբեք խնդիր չեն յարուցել, թէ այդպիսի հայերը իրաւունք չունեն մասնակցել ազգային գործերին, այլ ընդհակառակը, այդ մասնակցութիւնը համարել են մի ուրախակի երևոյթ, մի քայլ դէպի ազգային միութիւնը և համագործակցութիւնը:—Նոյն թիւական ատաղձորները միշտ իրանց ոյժը, իրանց հեղինակութիւնը որոնել են ժողովրդի մասնակցութեան և համագործակցութեան մէջ:

Բայց այժմ սկսվել է նոր հոսանք, սկսել է նոր քամի փչել: Թաւրիզի այժման ատաղձորը, թեմական գործերը կարգաւորելու պատրաստակով, հաստատում է ատեն կամ կառավարութիւն, որպէս զի, ինչպէս փաստաբանում են վարձկան գրչակները, ատաղձորը գործէ կողմէ-գիւղ ձեռով և ոչ ինքնիշխան. բայց այդ ատենանը նա կազմում է լոկ հոգեւորականներից, տեղական մի երկու ողորմելի քահանաների անդամակցութեամբ, քահանաներ, որոնք երբեք չեն յանդգնի ծագուն հանել ատաղձորի ատաղ, ուր մնաց թէ անկախ կարծիք և զատողութիւն տալ:

Եւ այդ խորամանկ քայլով, ժողովուրդը զըրկ-վում է ազգային գործերի մէջ մասնակցելու հին իրաւունքից, ատաղձորը տառնում է հարաւորութիւն կառավարել ազգային գործերը իր քմբի համաձայն:

Եւ մինչ Թաւրիզի ատաղձորը գործում է այդ ուղղութեամբ, մի ուրիշ վարդապետ, Սահակ Սլաւոտեան, որ ուղարկված է Սպահանի թեմի կառավարիչ, թէ՛հանում ազգային ժողով գումարելով տեղական դպրոցների նոր հոգաբարձութեան ընտրութեան համար, արգելում է բողոքականներին մասնակցել այդ ժողովին, առարկելով թէ այդպիսիները իրաւունք չունեն միջամտել լուսաւորչական հայրերի գործերին: Բողոքականները բողոքում են այդ բռնաբարութեան դէմ, մասնաւորապէս որ իրանց աչքի առաջ վարդապետը թոյլ է տալիս, որ մի ուրիշ այլադասան, կաթողիկէ հայ, ոչ միայն մասնակցի ժողովին, այլ և ընտրվի հոգաբարձու: Եւ ինչու է այդ անուժ վարդապետը: Որովհետեւ այդ կաթողիկէ մի հոգոր, ազգային անձնաւորութիւն է համարում... Եւ այսպէս, մի տեղ մի ատաղձորը ամեն հնար գործ է դնում հեռացնել ժողովրդին ազգային գործերի կառավարութեան մէջ մասնակցելուց, մի ուրիշ տեղ, մի ուրիշ ատաղձորը սերմանում է ատենութիւն և թշնամութիւն մի և նոյն ազգի անդամների մէջ, բռնաբարելով նրանց վաղեմի իրաւունքները:

Այդ տեսակ հոսանք ատաղ բերելով, այդ հոգեւորականութիւնը երեւակայում է իր ոյժը մեծացնել, իր դիրքը ամրապնդել:—Բայց հաւատացնում ենք, այդ հոսանքը անգունը կը գլորի նոյն այդ հոգեւորականութեանը:

Հ. Ա.

ՊԵՏԵՐԳՐԱԴԻ ԹԻԻՐԱՅՈՒՆ ԳԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՂ-ՄԻՑ
—
Պետերգրադի թիւրքաց ղեկավարութիւնը ուղարկել է «НОВОСТИ» լրագրի խմբագրութեան մի անհիմն և անմիտ հերքում Սասունի գործերի առիթով: Այդ հերքումը գրված է ֆրանսերէն լեզուով, որի թարգմանութիւնը ահա առաջ ենք բերում:

«Մեծագոյն պարոն. «НОВОСТИ» լրագրի ներկայ տարվայ նոյեմբերի 3-ի համարում «Daily News» լրագրից մի անհիշող տեղեկութիւն է արտադրած Սասունի առիթով: Թիւրքաց կայսերական ղեկավարութիւնը խնդրում է ձեռք, մեծագոյն պարոն, հերքել այդ սխալ տեղեկութիւնները հետեւալ պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա:

«Հայ աւազակները, զինուորված արտասահմանից ստացված զենքերով, միացան քիւրդ ապստամբների հետ, աւազակութիւնների կատարելու համար, այրեցին և քարոզեցին արեցին այդ տեղերում գտնված մահմեդական գիւղերը: Այդ աւազակները գաղաւթիւնների մասին դադարի տալու համար բաւական է լինել, որ հայ աւազակները, ի միջի այլոց, կենդանի այրեցին մի մահմեդականին, մոյնելով նրա փորի մէջ զինւորված նիւթեր: Կանոնաւոր զօրքեր ուղարկվեցին, հրամանագրելով նրանց պաշտպանել խաղաղ բնակիչներին բոլոր անկարողութիւններից, և հակառակ այն չարախօսութիւնների, որ տարա-ծում էին ղեկավարական այդ արշաւանքի մասին, կայսերական զօրքերը ոչ միայն պաշտպանեցին և իրանց հովանաւորութեան տակ առան ազգաբնակչութեան խաղաղ մասը, կանանց և երեխաներին, բայց և բարեխղճաբար կատարեցին իրանց պարտքը, վերականգնելով, ի բաւականութիւն ընդհանրելու, հասարակական կարգը և հանգստութիւնը:

«Բացի դրանից հաւատացնում էին, որ իբր թէ քիւրդերը խել են փակած հայերի կահկարասի-պիսի բան չէ եղել: Նրանք աւազակները քնցին տաւարը իրանց հետ դէպի լեռները, ապտամբութիւն սկսվելուց առաջ, և յանձնեցին այդ իրանց քիւրդ ընկերներին:

«Նոյնքան անհիմն են և այն տեղեկութիւնները, որ իբր թէ քիւրդերը փախել են շատ հայ կանանց, այդ հայտնիները, պատկանելով վերոյիշեալ հայ աւազակների ընտանիքներին, իրանց սեփական ցանկութեամբ միայն քիւրդ ապստամբների հետ լին: Դրա վերաբերում է այն հայ գիւղերին, որոնք իբր թէ կողոպտված են, պէտք է ասել, որ իրանք հայերը, աւազակախմբերի հետ միա-նալուց առաջ, տարան տներին իրանց բոլոր գոյքը:

«Այն տեղեկութիւնը, որ իբր թէ հայերը տանջ-վում են Բակրալի քիւրդ ցեղի բռնութիւններից,

նոյնպէս կատարելապէս հնարված են. այդ բա-ւական չէ.—հայերի ձեռքով կենդանի այրվելով, չարաչար մահվան ենթարկված թշուառ հէնց այդ նոյն ցեղին էր պատկանում:

8 նոյեմբերի.
Պետերգրադ.

ՊԵՏԵՐ Ե ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆՆԵԼ

Մեր թղթակիցը Գարաշիշապէց մեզ գրում է հետեւեալը. «Մշակի» № 128-ի մէջ տպագրված «Բարբարոսութիւն է այդ» վերնագրով յօդուածը մեծ ազդեցութիւն է անում գիւղական շրջաններում, որտեղ ոչ միայն 12—17 տարեկան պատանիներին և 8—12 տարեկան անապահաս աղջիկներին են ամուսնացնում, վաղաժամ ծանրացնելով այդպիսի զեռահասների վրա ընտանեկան դժուարատար հոգանքը, այլ և 20—25 տարեկան պատուած աղջիկներին, երկու խնամիրացող ընտանիքների քմահաճութեան համաձայն, դանա-դան հանգամանքների պատճառով, յաճախ պատ-կում են 10—12 տարեկան տղաների հետ, որոնք գաղափար անգամ չունեն թէ ամուսնութեան մասին և թէ մարդկային—սեռական պահանջնե-րի վերաբերմամբ...»

«Շատ մօտ յարաբերութեան մէջ լինելով գիւղական ժողովրդի հետ և բազմաթիւ տեղեկութիւններ ունենալով ամուսնական պայմանների մասին, որոնք զոյգութիւն ունեն գիւղական հասարակութեան դանադան խտրում» մենք խոստանում ենք մի մանրամասն յօդուածով խօսել ամուսնական այդ հրէշաւոր պայմանների մասին, որոնք հեռուէտէ պատճառ են դառնում գիւղա-կան ժողովրդի թէ բարոյական և թէ սեռական կեանքի անկման...»

Ուրախութեամբ տպագրելով մեր թղթակցի այդ նկատողութիւնը, մենք առիթից օգուտ ենք քաղում, և հրաւիրում ենք մեր գաւառական թղթակցներին առանձին ուշադրութիւն դարձնել ամուսնական հարցի վրա: Այդ հարցը մեր գիւղական կեանքի ամենահիւսնալից կողմե-րից մէկն է:

Մի կողմից ժողովրդի տղիտութիւնը, միւս կողմից տղէտ, անաբժան, կաշառակեր հոգեւոր-կանութիւնը, որ աւելի ոյժ է տալիս ժողովրդի վայրենի սովորութեան, պատկելով անապահաս երեխաներին, սպառնում են միանգամայն այլա-սեռել մեր նոր սերունդը:

Մեր հոգեւոր իշխանութիւնը այնքան անընդու-նակ է, որ չէ կարողանում հասկանալ, թէ ժա-մանակ է վերջապէս որոշ կանոններով սանձա-հարել կաշառակեր եկեղեցական պաշտօնականի, այդ վարմունքը, և գոցել դեռ կան միամիտներ, որոնք կարծում են, թէ 10—12 տարեկան աղջե-կան, և 14—16 տարեկան տղաներին պատկել-մի բացառիկ երեւոյթ է:

Այդ պատճառով մենք շատ նպատակալարմար

ենք համարում հրապարակ հանել այն հարեւա-ւոր ստակի փաստերը, որ տեղի են ունենում գիւղերում և նոյն իսկ քաղաքներում, ցոյց տա-լու համար, թէ ինչ հրէշաւոր դիրք է ստացել այդ հարցը:

Ուստի դիմելով մեր գաւառական թղթակից-ներին, հրաւիրում ենք նրանց ուսումնասիրել այդ հարցը, և հրապարակ դուրս բերել բոլոր փա-տերը:

Այդ փաստերով զինված, մենք յոյս ունենք՝ որ կը ստիպենք վերջապէս մի որ և է միջոց ձեռք առնել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, սեպտեմբերի 11-ին
Սրանով գալիս ենք հրապարակով յայտնելու մեր դժգոհութիւնը թեմիս ատաղձորը Սուքիաս արք. Պարզեանի՝ այս օրվայ՝ յաշվեբաց տօ-նի առիթով տուած քարոզի դէմ, որ բազ-մաթիւ բանիմաց անձնաւորութիւնների ներ-կայութեամբ թոյլ տուեց իրան սրբապաշտել եկեղեցին՝ յիշոցներ և լուսանկարներ արտասանելով պատարագի միջոցին մի ամբողջ կուսակցու-թեան և ազգի ցաւերի մասին խորհոցների հաս-ցէին, որը մենք ամօթ ենք համարում կրկնել: Բողոքելով թեմական ատաղձորի դէմ, հրաւիրում ենք հոգեւոր բարձր իշխանութեան ուշադրու-թիւնը:

Ստորագրութիւններ

ՆԵՐՍԷՍ ԼՈՒՐԵՐ

Ներէկ, նոյեմբերի 15-ին, Թաղաւոր Կայսրի պա-կազմութեան առիթով, բոլոր պաշտօնական հիւ-նարկութիւնները և դպրոցները փակ էին, և քա-ղաքը զարդարված էր դրօշակներով: Սիօնի մայր եկեղեցում, ինչպէս և հայոց վանքի մայր եկե-ղեցում, և բոլոր դաւանութեան տաճարներում կատարվեցին զոհացողական մաղթանքներ՝ խուռն բազմութեան ներկայութեամբ:

Ինչպէս յայտնի է, Թաղաւոր Կայսրի թաղմա-նը՝ Թիւրքիան պատգամաւորութիւն չուղարկեց: Այդ մասին «НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթա-կիցը նոյեմբերի 1-ից գրում է հետեւեալը. «Ներ-կայումս պարզվեց, որ ի Տէր հանգուցեալ Ալեք-սանդը III Կայսրի թաղման օրը այստեղից ար-տակարգ ղեկավարութիւն չի ուղարկվի Պետեր-բուրգ: Անցեալ օրը լուրեր էին պտտում, որ սուլթանը այդ միտիայով կուղարկի Ֆուադ-փա-շային և մի քանի աւագ օֆիցերներին: Բայց յե-տի դաշարեցին խոսել այդ մասին, այնպէս որ փոխարէն ներկայացուցելը կը լինի թիւրքաց ղեկաւան Հուսնի-փաշան: Պալատական շրջաննե-րում այդ հանգամանքը նրանով են բացատրում, թէ որովհետեւ Թիւրքիան յատուկ պատգամաւոր-

բողանք. էսօր մեռնինք էլ աղէկ է, ու հէսիր չեղնինք դա՛ղինա:

Արդէն գիւղեր վառելու հրամանէն առաջ, տա-ճիկ բանակն, խառն հէմիդէի ու էշիրաց հետ, թնդանութեամբ կռիւ բռնված էր: Թնդանութեան-րու որոտման հետ որոտացին նաև տաճկական ա-ւետիքները, որ իրարու կը հաղորդէին, թէ անհոգ եղէք: Պղնձեթիկի հէմիդէի գոթը յարձակվելով նոյն տեղեր ու մինչ Տաւրիկի հասնելով՝ այրեց իր շրջակայ գիւղերով միասին: Այրուած մի-ջոցին Տաւրիկի և յիշակայ գիւղեր դատարկ էին, որովհետեւ զրգանցի քիւրդ յօրման աղան խաբէութեամբ Տաւրիկի և գիւղերու բնակիչ-ներ յորդորելով իր էշիրի մէջ կը տանէ ըսե-լով. «Իմ հայն էք, դձեղ կը պահպանեմք ու դէնքեր առնելով յետ կը զրկէ, ուր բոլորն ալ սուրի ճարակ կերթան:

Այժմ տաճիկ բանակն աւելի սիրտ առնելով՝ սաստկացուց թնդանութեաց յարձակումը, ու Ատոք լեռ պաշարուեցաւ. ամեն կողմերէ: Հայեր ալ եւ ուժաթափ ու անօթութեան նուազեալ՝ անկարող մնացին ունին անկու. արդէն իրանք ալ քիչ էին. 1000 անձով 60,000 տաճիկ ու քրդաց զէմ կըը-ւեցան 17 օր և միայն Շէնըքին, Սէմազին, Կէլիկեղաւանցին ու Ալիանցին էին, որովհետեւ անցքեր փակուած էին և օդնութիւն չը կըցա-հաներ: Սոցա քիսաւորն էր անուանի Մուրատ իր ութը ընկերներով և չէնըքի Մուսթաֆան զիւ-ցազն Գրիգոր, որի սպանուին կամ ողջ մնան

տակաւին հաստատ չի գիտցվի: Թիւրքեր սկսան անգթաբար խողովողը գհայեր, չը խնայելով ոչ ոքի:

Սեպտեմբերի 5. Կալէ եղաւ ամբողջ օրը: Աւանց հաց, միս էր հայոց կերակուր. ալ կարո-ղութիւն չէր մնացել, երբ ինկան տաճիկ ճանկ-կատորցեցին չարաչար ու գաղանապէս մարդեր, կնիկ-ներ, մատաղ երեխաներ: Եթէ տղամարդիկ ըլլային՝ գէթ փակելով ճարմ կը գտնէին. իրենց աղէկուող-ընտանեաց ձայնէն կը փաթըլվէին անոնց ու միա-սին կը մեռնէին, մահաւաճը որ կը լսէին մատաղ երեխաների աղիողորմ ձայն. «Մամ, ուժ եղաւ, հոգ բահում, ու չնչապատուած գետին կիյնային: Գազան տաճիկ սուրը կը շողար ու հայու գլուխ-կը գլորէր: Օհ, աղէկաբաշ տեսարան, ալ չի կա-րելի գրելով նշանակել նոցա արարքն: Գիշերն հա-սաւ. մթնութեան մէջ կիսամեռ. անձանց վախա-սուռ երկնքի լաց կը հանէր. իսկ հայ եղբայրը ինչ պիտի ընեն...»

Լուսաբացին տաճկական բանակն դարչահո-տութիւնէն փոխուած էր Սէմալ գիւղի արեւելեան հա-րաւ, երբ նոյն այրուած գիւղի բահման ու գիւղա-պետ շատ անուն անձ և 40-ի չափ երիտասարդներ, չարաչար աղատուած, դէպի տաճկական բանակ կուգան երկրպագութիւն ու հնազանդութիւն ա-նելու: Սակայն դաժան տաճիկը մինչ երկոյ պա-հելով եկող քահանան ու հայեր, մութ տիրած պահուն բանակի ներքե ձոր մը կը տանեն: Ար-դէն ատաղձուց պատրաստած է եղել գերան մը,

բոլոր հայերու ոտքեր ու ձեռքեր կապելով գե-րանի վրա բարձրացնելով պարանոցներ՝ ապա սղոցով կը կտրեն գլուխներ, իսկ մարմիններ հոն-կը մնան տակաւին արեակէջ, անթաղ: Իսկ գիւ-ղապետ Հասուն ու քահանան անգամ անգամ կո-տորելով, հորին մէջ կամփոփն և քարակոյտ ընկելով՝ անարգանաց վայր կը նշանակեն: Այդ բոլոր չարեաց պատճառ Բաղէշոյ կուսակալ և Ֆէրիք փաշան եղան ու կանոնաւոր զօրաց մի-ջոցաւ գործադրելու տուին:

Գալով Համիդէի ու Էշիրեքու, ինչպէս ըսինք, բացարձակ հրաման տրուած էր հինգ գաւառի գիւղեր շրջել, տեսած մարդիկ սպանել, գոյքեր կողոպտել ու գիւղեր հրդեհել: Դաժան զա-վայ մէջ հրամանը կարգադրուեցաւ. ամբողջ գա-ւառաց գիւղեր ամայի ու հրոյ ճարակ եղան և գտնուած մարդերն ալ կոտորուեցան. ոչ ոք ա-ղատուեցաւ: Ահա այրուող գիւղերի խոր-թիւն, Շառալի գաւառ.—Շէնըք, Սէմալ, խոր-թիւն, Աղբէր, Սըմալ, Հէթինք: Սասուն գա-ւառ.—Գէլիէ-Գուզան, Հասնի, Միլիթար, Մէրիկթ, Էղկարա, Սըրանք, Հարթը, Գուալինք, Հազման, փուրի, Հիւղինք, Սըմալիթ, Տաւրիկի: Խիտն գաւառ. Խիւրճար, Արթիկ, Սէփու:

Աւանց այրուելու կողմ պառուած ու աւերված գաւառներ.—Փսանաց գաւառ ի ամբողջ գիւղեր, Պէրմայ գաւառ ի ամբողջ գիւղեր, Խիտն ու գիւղեր՝ Սըղբուն, Փառկայ, նոցա ընկերք: Գէրդ և Պոզուն անպատկառ, իսկ չափայ

գիւղեր—Ընձաքար, Գեշերվան, Ահարոնք, Էուր, Կոկնաձոր, և այլն տեղեր, որոնց լաւ ծանօթ չենք: Այրուող գիւղերու ամբողջ եկեղեցիք այ-րուած են, քառասունի չափ քահանաներ կոտո-րուած են, իսկ մարդոց թիւը դեռ անյայտ է: Ե-կեղեցեաց սրբազան անօթը և գոթը քրդաց քով կը գտնուի, յայտնապէս պայտուսկաց մէջ դը-նելով՝ գիւղ կը պտտցնեն աւետարան, խաչ սկիւհ, բուրվառ, չուրջառ և այլն բաներ: Հայրերուն կը կանչեն անարգելով. «Բնչու չէք առնել ձեր խաչն ու ինչ իլ, մինչև երբ փակն իրենց բերեն, գոթը ատոնց յուսացած էիք: այժմ հէսիր են, թող գմբ պատիժ տան: Ոչ ոք կարող է բան մը ասել քրդաց:

Այս ամեն չարեաց վերջ դեռ չը յաղեցաւ տա-ճիկն. սկսան այս ու այն կողմ որոնել հերոսա-պետ Մուրադ և իր ընկերներ, զի նոցա միայն դիակ չը տեսան, հաստացին որ բան մը չէր պատահած անոնց: Եւ իրօք, Մուրադ ընկերներով միասին աջողած էր խոյս տալ և Տաւրիկի ա-ւերակներ քարայր մը պատուարուելով՝ աղա-տուել: Սակայն ուստի չը գտնելով ամա-յի քարայրը՝ ընկերաց մինն դուրս կուգայ ու տեսն ճարեւու: Ինչպէս խաղաղ, սակայն չըր-ջուն ուսովկաններ գաղտ ընկերին հետեւելով՝ քա-րայր կը գտնեն ու կը ձերբակալեն: Մուրադը Օհանէն, Կարապետ, Սէնէքերիմ և Ալաւմ, իսկ նոցա ընկերք: Գէրդ և Պոզուն անպատկառ, իսկ չափայ

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.